ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1485-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 05-002-0069-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՏՆՎՈՂ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2011 թվականի թիվ 1918-Ն և ՀՀ Կառավարության 21.04.2011 թվականի թիվ 558-Ն որոշումով, ՀՀ Կառավարության 02.02.2002 թվականի թիվ 88 որոշման 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի բնակիչ Կարո Վազգենի Սևանյանի կողմից 04.09.2026թ. տրված Դ-373 դիմումը, սահմանված կարգով ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի Գ. Նժդեհի փողոց 202 հասցեում գտնվող համատեղ սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ 29042026-05-0120/ 0.15731 հա հողամասում գտնվող օժանդակ շինությունների նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Փոխել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի Գ.Նժդեհի փողոց 202 հասցեում գտնվող 05-002-0069-0010 կադաստրային ծակագրով, Կարո Վազգենի Սևանյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ 29042026-05-0120/ 0.15731 հա հողամասի վրա գտնվող 226.1քմ ընդհանուր մակերեսով օժանդակ շինությունների նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության կատեգորիայի:
2. Հողամասի նշանակությունը համապատասխանեցնել շինությունների գործառնական նշանակությանը՝ բնակավայրի բնակելի կառուցապատումից փոխել որպես այլ արտադրական նշանակության հողատեսքի:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 11
ք. Ճամբարակ